

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՄՐՅԱՆ ԱրդԴ

ԳԱՎԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1 Գնագոյացման պետական կարգավորում

Կարգավորվող շուկայական տեսության դրույթները հիմնավորվեցին Զ. Քեյնսի կողմից: Քեյնսը հիմնավորեց,որ որքան էլ ազատ շուկայական մրցակցության պայմաններում գները կարգավորվում են ինքնակարգավորման շուկայական մեխանիզմի միջոցով, այնուամենայնիվ գների պետական կարգավորումը համարվում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության կողմից ազատ գնային գործընթացի կազմակերպումը առանձին դեպքերում պետության կողմից սահմանվակալում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- պետության կողմից հաստատագրված գնի սահմանման միջոցով,
- գների կարգավորման նպատակով պետության կողմից ձեռնարկությունների համար մշակված գնագոյացման պայմանների, ձևավորման տնտեսական հիմքերի, գների վերադիրությունների, շահութաբերության մակարդակի, պետական ձեռնարկությունների արտադրանքի գների սահմանման միջոցով,
- պետության կողմից սահմանափակումները կատարվում են նաև գնային խտրականության, ոչ որակյալ ապրանքների գովազդի կանխման միջոցով,
- Այնպիսի տնտեսական լծակների կիրառմամբ, որոնք կարգավորված գների միջոցով խթանում են տնտեսվարման շուկայական մեխանիզմի ձևավորման գործընթացը:

Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորման խնդիրը կարող է լուծվել ուղղակի և անուղղակի մեթոդներով:

Տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա գների պետական կարգավորման վրա ուղղակի մեթոդի եռաջունը կայանում է նրանում, որ մշակվում են գների մակարդակի որոշման մեթոդական ցուցումներ, իրահանգներ, սահմանվում են գների հաշվարկման կարգը, կազմվում են համապատասխան օրենսդրական, իրավական ու նորմատիվային ակտեր, որոնք են ծառայում գների մակարդակի որոշման համար: Կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում ուղղակի մեթոդով գների պետական կարգավորման գործընթացն իրակացվում է նաև անմիջականորեն պետության կողմից հաստատագրված գներ սահմանելու միջոցով: ԼՂԴ-ում հաստատագրված գներ են սահմանվել Էլեկտրաէներգիայի, գազի, տրամապորտի, ջեռուցման, և այլնի նկատմամբ: Շատ երկրներում հաստատագրված գների տեսակարար կշիռը տատանվում է 10-15 տոկոսի սահմանները, իսկ ՀՀ-ում 0,01, մի փոքր տարրերությամբ ԼՂԴ-ում:

Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորման անուղղակի մեթոդի եռաջունը այն է, որ պետությունը արտադրողների նկատմամբ անուղղակի ներգրծությունը իրականացնում է ֆինանսավարկային, հարկաբյուջետային, մաքսային, քաղաքականության, փոխադրումների սակագների, այլ տնտեսական լծակների միջոցով: Գների պետական կարգավորման անուղղակի մեթոդի պահանջներով պայմանավորված տնտեսական լծակների փոփոխությունները հատկապես կարևորվում են շուկայական տնտեսության ուղին նոր թևակոխած երկրների համար, որոնցում դեռևս վերջնականապես չեն ձևավորվել շուկայական կառույցները, իսկ տնտեսությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով շարունակում է գործել ճգնաժամային իրավիճակում:

2. Գների համակարգը

Ապրանքափոխանակության զարգացմանը զուգընթաց, կապված նոր ճյուղերի առաջացման, նոր արտադրատեսակների արտադրության կազմակերպման, սպասարկման ոլորտների ընդլայնման հետ, գործում են գների տարրեր տեսակներ, որոնք համատեղ կազմում են գների համակարգ: Չնայած շուկայական հարաբերությունների ոլորտում գործում են գների տարրեր տեսակներ, այնուամենայնիվ, դրանք միմյանց հետ սերտ փոխկապված են և դրանց որոշ մասը մյուսների համար ունի ելակետային նշանակություն: Եվ հենց դա է պատճառը, որ գների

առանձին տեսակների փոփոխությունը պատճառ է հանդիսանում մյուսների փոփոխության համար, իսկ վերջինս էլ իր հերթին պայմանվորված է հետևյալով.

- տնտեսության տարբեր ոլորտներ գործում են ծախսերի ծևավորման միասնական գործընթացում,
- բոլոր տնտեսվարող սուբյեկտները փոխկապված են զանազան բնույթի կոռապերացման կապերով,
- շուկայական բոլոր կառույցները փոխկապված են և լրացնում են միմյանց:

Գների համակարգը բաղկացած է հետևյալ գներից:

Զեռնարկության շուկայական գինը - իրենից ներկայացնում է միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի հանրագումարը և ստացված նորմատիվով հաշվարկված շահույթի գումարը:

Զեռնարկության իրացնան կամ բացքողման գինը - իրենից ներկայացնում է շուկայական գնի և անուղղակի հարկերի գումարը: Առանձին դեպքերում որպես բացառություն առևտրային միջնորդ կազմակերպություններին թույլատրվում է ապրանքը վաճառել ծեռնարկության շուկայական գներով այն դեպքում, եթե այդ ապրանքները հարկային օրենսդրությամբ ազատված են ԱԱՀ-ից և չեն հարկվում ակցիզով:

Ազատ շուկայական գները - գուտ մրցակցության պայմաններում ծևավորվում են շուկայում պահանջարկի և առաջարկի հարաբերակցությամբ: Ըստ շուկաների մրցակցության և պետության կողմից ներգործության և կարգավորման հատկանիշի տարբերում են գների հետևյալ տեսակները .

Ազատ շուկայական գինը ծևավորվում է շուկայի ինքնակարգավորման սկզբունքով՝ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությանը համապատասխան: Գների այս տեսակը հատկապես բնորոշ է կատարյալ մրցակցային շուկային, որովհետև այդ դեպքում առկա են մեծ թվով արտադրողներ և սպառողներ և որոնք արտադրում են համասեռ արտադրանք:

Պահանջարկի գինը ծևավորվում է սպառողների պահանջներին համապատասխան և բխում է գնագոյացման արժեքավորման մեջողի պահանջներից:

Առաջարկի գինն առաջարկում է արտադրողը ելնելով միավոր արտադրանքի վրա կատարած հաստատում և փոփոխուն ծախսերից,

ինչպես նաև նորմատիվային շահույթի մակարդակից և ներկայացնում է որպես ծեռարկության շուկայական գիճ:

Արտադրության գիճն այն շուկայական գիճն է, որն առաջարկում է արտադրողը ելնելով միավոր արտադրանքի վրա կատարած ծախսերից, ինչպես նրա միջին շահույթի մակարդակից, որն ստացվում է ավանսավորած ամբողջ կայտալի դիմաց:

Կարգավորվող գները սահմանվում են կառավարության կողմից, որոնք իրենց հերթին կարող են լինել երաշխավորված, լիմիտային, գրավային, պաշտպանական: Կարգավորվող գնի տեսակ է սահմանային գիճը: Դա հաշվարկված գնի այն սահմանն է, որից բարձր ծեռարկությունը չի կարող վաճառել իր արտադրանքը:

Հաստատգրված գները սահմանվում են որոշակի մակարդակով, որոնց փոփոխությունը տեղի կունենա միայն շուկայական այն սուբյեկտների կողմից, որոնք սահմանել են այդ գիճը:

Ըստ գների մակարդակի մասին տեղեկատվության ստացման եղանակի տարբերում են գների հետևյալ տեսակները.

Հրատարկված շուկայական գիճը նշվում է համապատասխան տեղեկատվությունում և կարող է դրսևորվել գնացուցակների տեսքով:

Անվանական շուկայական գիճը որպես բազա է ծառայում վերադիրների հաշվառման համար: Դա նշանակում է, որ զեղծերն ու վերադիրները հաշվարկվում են ելնելով անվանական շուկայական գներից: Այս հաճախ անվանում են բազային գիճ, քանի որ օգտագործվում է նաև ննանատիպ արտադրանքների գների որոշման համար:

Հաշվարկային շուկայական գիճը կիրառվում է պայմանագրով ոչ ստանդարտ սարքավորումների արտադրության դեպքում, որոնք բողարկվում են պատվերային սկզբունքով:

Ըստ շուկայի առանձին տեսակների, գները կարող են լինել աճուրդային, բորսային, գնանմուշների և տորգի գների տեսքով:

Աճուրդային ապրանքների շուկայում գները սահմանվում են աճուրդային կարգով: Աճուրդային գնի սահմաննան առածնահատկությունն այն է, որ որոշման գործընթացին նաև ակցում են մեծ թվով սպառողներ և սահմանափակ թվով վաճառողներ: Ի տարբերություն բորսայի, աճուրդային վաճառքը իրականացվում է անմիջականորեն ապրանքների առկայության պայմաններում և քանի որ աճուրդային ապրանքը եզակի է ուստի և աճուրդային գիճը գերազանցում է շուկա-

յական գնին: Այն մեծ չափով պայմանավորված է նաև վաճառողի վարպետությունից:

Բորսայական գնաննուշները արտահայտում են բորսայում միատիպ և միմյանց փոխարինող ապրանքներին առնչվող գործարքների դիմաց սահմանվող գնի մակարդակը: Ապրանքային բորսայում որպես կանոն վաճառվում են գյուղատնտեսական, ոչ պարենային ապրանքներ, անտառային հումք, գունավոր և թանկարժեք մետաղներ, նավթամթերք, հացահատիկ և այլն: Առուրդային և բորսային գները հրատարկվում են հատուկ բյուլետեններում:

Առևտրային շուկայական գինը, որպես կանոն, ձևավորվում է հատուկ մասնագիտացված առևտրային կազմակերպություններում, որոնք կարող են պատվերով առաքել որոշակի քանակությամբ արտադրանք կամ ստանալ առաջադրանքներ՝ որոշակի աշխատանքներ կատարելու նպատակով:

Տորգի գինը իրենից ներկայացնում է առևտրի այդ հատուկ ձևին բնորոշ այն միջնորդավորված գինը, երբ մի քանի մրցակիցներ առաջարկում են պատվիրատուին իրենց նախագծերը՝ որոշակի աշխատանք կատարելու նպատակով, որոնցից պատվիրատուն ընտրում է առավել արդյունավետը: Առևտրի այդ ձևին բնորոշ է այն, որ այստեղ առկա է մի քանի վաճառող և մի գնորդ:

Ըստ ժամանակի գործոնի տարբերում են.

Դաստատում են համարվում այն շուկայական գները, որոնց գործողության ժամկետը չի որոշվում նախապես:

Նեղոնային շուկայական գները սահմանվում են ըստ ժամանակի որոշակի հատվածի՝ ելեկտով ինչպես ապրանքների, այնպես էլ ժամանակի առանձնահատկություններից:

Աստիճանային գները իջեցվում են ըստ նախապես սահմանված սանդղակի և շուկայի տարրողության փոփոխության համապատասխան:

Ըստ մատակարարման սկզբունքի, առաջման բնույթի և գտնվելու վայրի տարբերում են «ֆրանկո գործարան», «ֆրանկո ուղարկման կայարան» և «ֆրանկո նշանակման կայարան» շուկայական գները: Դա նշանակում է որ, ելեկտով աշխարհագրական միջավայրի սկզբունքի պահանջարկից, արտադրողը առաջնորդվում է «ֆրանկո» շուկայական գնի սահմաննան ռազմավարությամբ: Այդ առումով գնային ռազմավարության հիմնական առանձնահատկությունը այն է, որ պահանջվում է

պարզել թե փոխադրման ծախսերը ինչպես են վերագրվում արտադրանքին և ով է դրանք փոխհատուցելու՝ արտադրողը, թե սպառողը:

«Ֆրանկո գործարան» գնով ապրանքը իրացնելիս փոխադրման ծախսերը ամբողջությանք պարտավոր է փոխհատուցել սպառող կազմակերպությունը:

«Ֆրանկո ուղարկման կայարան» շուկայական գնով ապրանքը իրացնելիս ելակետ է «Ֆրանկո գործարան» գինը, ինչպես նաև մինչև ուղարկման կայարան արտադրանքի փոխադրման, բեռնման և բեռնաթափման ծախսերը:

«Ֆրանկո նշանակման կայարան» շուկայական գնով ապրանքը իրացնելիս արտադրողը պարտավոր է վճարել այն բոլոր ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապրանքը մինչև սպառողի գտնվելու վայրը փոխադրման համար:

Միջազգային պրակտիկայում ապրանքների առաքման ժամանակ կիրառվում են *foB* և *cif* բազային պայմանները: Առաջինը նշանակում է, որ յուրաքանչյուր արտադրող իր առաքման պարտավորությունը կատարում է մինչև երկարուղային կայարան կամ նավահանգիստ բեռնման վայրը և պարտավոր է վճարել բոլոր ծախսերը կապված փոխադրման և բեռնման հետ: Երկրորդ պայմանը նշանակում է, որ յուրաքանչյուր արտադրող պարտավոր է վճարել բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապրանքները նշանակման վայր հասցնելու համար:

Գների մի առանձին տեսակ է համաշխարհային գինը, որով իրականացվում են ապրանքների արտահանման և ներմուծման գործառույթները: Համաշխարհային գինը միջազգային շուկայում ներկայացնում է արտադրության միջին համաշխարհային պայմանները կապված իրացման և սպառման հետ:

3. Գնագոյացման սկզբունքները և մեթոդները

Պահանջարկի և առաջարկի հարաբերակցության և գնագոյացման միջև գոյություն ունեցող օրինաչափությունները, արժեգրկման հետևանքով բնակչության բարեկեցության փոփոխությունները պարզաբանելու և այլնի համար անհրաժեշտ է պարզել գնագոյացման օրինաչափությունների և գործառույթների պարզաբանման որոշակի սկզբունքներ ու մեթոդներ:

Չնայած շուկայական տնտեսության պայմաններում ոչ գնային գործոնների դերն ու նշանակությունը զնալով մեծանում է, այնուամենայնիվ, գնային քաղաքականությունը, նրա սկզբունքների և մեթոդների պահանջարկի գնահատումը որոշիչ դեր ու նշանակություն ունի ապրանքափողային հարաբերությունների կարգավորման, արտաքին ու ներքին շուկայում ապրանքաշրջանառության արդյունավետ ծավալնան, տնտեսության ֆինանսական կայունացման, բնակչության կենսապայմանների բարելավման գործում:

Շուկայական տնտեսության պայմաններում գնագոյացման հիմնական սկզբունքներն են.

1. տնտեսական քաղաքականության և գնագոյացման քաղաքականության միասնական սկզբունքը,
2. տնային տնտեսությունների, ծեռնարկությունների և պետության շահերի զուգակցման սկզբունքը,
3. գնագոյացման, պահանջարկի և առաջարկի մրցակցության փոխկապվածության սկզբունքը,
4. գների նկատմամբ վերահսկողության սահմաննան սկզբունք:

Գնագոյացման օգտագործվող մեթոդների համակարգում առաջնային նշանակություն ունի ծախսային մեթոդ, որի հիմնական պահանջն է հաշվարկել և գնահատել արտադրության և իրացման գործընթացներում կատարված ծախսումները: Դայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում արտադրանքի և ծառայությունների գները վերջնականպես ծևակվորվում են շրջանառության ոլորտում ըստ առաջարկի և պահանջարկի օրենքների: Սակայն դրանց գների ծևակվորման գործընթացը ամենից առաջ կապվում է արտադրության գործընթացում իրացված արտադրանքի և ծառայությունների գործընթացների կազմակերպման հետ: Ուստի գնագոյացման ծախսային մեթոդի համաձայն պահանջվում է ճշտել արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների արդյունահանման, փոխադրման հետ կապված ծախսները: Փաստորեն ծեռնարկության կողմից շուկա հանվող ապրանքների և ստացված արդյունքների քանակությունը մի կողմից կախված է տնտեսական ռեսուրսների ծեռքբերման գնից և դրանց արդյունավետ օգտագործման մակարդակից, մյուս կողմից բուն արտադրության գործընթացում կատարված ծախսներից: Դրան ավելացնելով արտադրության գործընթացի շարունակությունը կազմող արտադրության գործընթացի շարունակությունը կապված ծախսները:

րանքի իրացման ծախսերը՝ հաշվարկում են արտադրության լրիվ ծախսերը: Գնագոյացման կազմակերպման ծախսային մեթոդի առաջին հիմնական պահանջն այն է, որ ծեռնարկության արտադրական գործունեության արդյունք հանդիսացող ապրանքների կամ ծառայությունների իրացման շուկայում գները գերազանցեն արտադրանքի լրիվ ծախսերը:

Գնագոյացման կազմակերպման ծեռնարկության կողմից ծախսային մեթոդի հաջորդ պահանջն այն է, որ ծեռնարկության կողմից արտադրանքի իրացումից ստացվող հասույթը պետք է երաշխավորի ծեռնարկության բնականոն գործունեությունը:

Գնագոյացման նորմատիվային մեթոդի հիմնական պահանջն է առաջնորդվել հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի, աշխատանքի վարձատրության գիտականորեն հիմնավորված ծախսային նորմատիվներով: Եթե վարչականացական տնտեսության պայմաններում արտադրության ծախսերը հաշվարկելիս կիրավում էին վերադասի կողմից ծախսային լիմիտներն, նորմերն ու նորմատիվները, ապա շուկայական տնտեսության պայմաններում անհրաժեշտ նորմատիվները հաշվարկվում են ծեռնարկությունների կողմից, որոնք նախապես հիմնավորվում են գիտատեխնիկական առաջընթացի բնագավառում ծեռքբերված նվաճումներով:

Գնագոյացման մեթոդներից է նաև անվճասաբերության և նպատակային շահույթի ստացման մեթոդը, որի հիմնական պահանջն է ծեռնարկության ծախսերը, շահույթը և արտադրության ծավալը համակցել այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե որքան պետք է արտադրել և ինչ գնով վաճառել: Դա նշանակում է, որ ծեռնարկությունը պետք է սահմանի այնպիսի գին, որի դեպքում արտադրությունը լինի անվճասաբեր, ստացվի նպատակային շահույթ: Այսինքն սահմանված գինը պետք է փոխհատուցի ծախսերը և ապահովի շահույթի ստացում:

Գնագոյացման մեթոդների համակարգում լայն կիրառություն ունի մարենատիկական մեթոդները, որոնց կիրառությունը հնարավորություն է տալիս արտադրության ծախսերի և գնի նակարդակի վրա ազդող գործուների համեմատության միջոցով ընտրել գնի առավել օպտիմալ նակարդակի որոշման առաջադիմական տարրերակ: Մաթեմատիկական մեթոդների կիրառման ուղղությունները բազմազան են, սակայն գնագոյացման հիմնախնդիրների ուսումնասիրության գործում

կարևոր նշանակություն ունի ռեգրեսիոն վերլուծության մեթոդը: Գնագոյացման բնագավառում ռեգրեսիոն մեթոդի կիրառման նպատակն է որոշել գների և արտադրանքների տեխնիկատնտեսական պարամետրերի ֆունկցիոնալ փոխկապվածությունը: Դա կարելր է արտահայտել հետևյալ կախվածությամբ.

$$P=f(X_1, X_2, X_3, \dots, X_n)$$

Որտեղ P -գիննէ

X_1, \dots, X_n -ը տեխնիկատնտեսական պարամետրերը:

Գնագոյացման մեթոդներից է ապրանքի գնի արժեքավորման մեթոդը, որի միջոցով որոշակի կապ է ստեղծվում արտադրողների և սպառողների պահանջունակության միջև, այսինքն այս մեթոդի խնդիրն է համակցել արտադրողների և սպառողների պահանջներն ու նպատակային խնդիրները: Գնի արժեքավորումը ենթադրում է սահմանել այնպիսի գին, որը կարողանա ծեռնարկության համար ապահովել շահույթ, իսկ սպառողների համար՝ խնայողությունների աճ: Գնի արժեքավորման գործընթացը պետք է դիտարկել թե՛ արտադրողի և թե՛ սպառողի տեսանկյունից: Եթե արտադրողի մոտեցումը գնի նկատմամբ վերջինիս անընդհատ բարձրացումն է, ապա սպառողինը՝ ապրանքի գնի օգտակարության համապատասխան գնի իջեցում: Իրականում սպառողների նման ձգտումը հանգեցնում է արտադրողների միջև մրցակցության, որի ընթացքում վերջիններս, ելնելով սպառողների ցանկությունից, ձգտում են գինը մոտեցնել սպառողների կողմից արժեքավորված գնին:

Սպառողների վերաբերմունքի հիմնան վրա գնի արժեքավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այնպիսի գործոններ, որոնցից առավել կարևորներն են՝ սպառողների պահանջի աստիճանը, փոխարինող ապրանքի առկայությունը, ապրանքի եզակիությունը, ծախսերի մակարդակը, պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը, գնողունակության աստիճանը:

Անշուշտ, գնի արժեքավորումը կախված է այն բանից, թե յուրաքանչյուր գնորդ ինչպես է ընկալում այդ գործոնների նշանակությունը: Բնական է՝ որքան սպառողի զգայության աստիճանը բարձր լինի, որքան ապրանքի սպառողական հատկությունների ընկալման վերաբերյալ տվյալները հավաստի լինեն, այնքան նրա կողմից գնի արժեքավորումը՝ կապված ապրանքի օգտակարության հետ, ավելի կլինի:

4. Գնագոյացման վրա ազդող գործոնները և դրանց դասակարգումը

Գինը արտադրության գործոններով ձևավորված արժեք է և կրում է դրանց փոփոխության ազդեցությունը, սակայն գնի վրա ազդում են նաև բազմաթիվ այլ գործոններ, այդ թվում իրացման պայմանները, առաջարկի և պահանջարկի հարաբերակցության փոփոխությունը, բնակչության վճարունակության աստիճանը, երկրի տնտեսական իրավիճակը և այլն: Տնտեսական մեխանիզմի և արտադրության գործոնների զարգացումը մշտապես հանգեցնում է շուկայական գների փոփոխության: Այդ առումով, ազատ գնագոյացման, մրցակցության և ծեռնարկատիրական գործունեության պայմաններում, գների վրա ազդող գործոնների վերլուծությունն ունի բացառիկ կարևոր նշանակություն: Այդ կարևորությունը կայանում է նրանում, որ գների վրա ազդող գործոնների հետազոտության միջոցով պարզում ենք ոչ միայն շուկայական գնի փոփոխության աստիճանը, այլև՝ թե ինչ գործոնների ազդեցությամբ են գները շեղվում արժեքից, և ինչպիսի կապ գոյություն ունի գների փոփոխության և պետության վարած տնտեսական քաղաքականության միջև:

Գների վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի:

- արժեգոյացնող կամ գնի մակարդակը պայմանվորող գործոններ,
- գինն արժեքից շեղող գործոններ,
- տնտեսական քաղաքականության հետ կապված գործոններ:

Գնի մակարդակը պայմանավորող գործոնները: Քանի որ ապրանքների արժեքը ձևավորվում է արտադրության բոլոր գործոնների դիմաց ստացվող եկամուտներով, ուստի դրանք ել պետք է դիտել որպես գնի մակարդակը ձևավորող գործոններ: Դայտնի է, որ արտադրության գործոնների համակարգում առաջնային դերը պատկանում է մարդկային գործոնին: Արտադրության այդ կարևոր գործոնի օգտագործման դիմաց կատարվող ամրող վճարները մտնում են արտադրանքի գնի մեջ: Աշխատանքային ծախսումների մակարդակը գնի մեջ կախված է ոչ միայն աշխատողների բացարձակ թվաքանակից, այլև կրթական, մասնագիտական հմտությունից և ունակության աստիճանից: Եվ որքան բարձր լինեն նշված պարամետրերը, այնքան ապրանքի գինը կլինի բարձր:

Գնի մակարդակի վրա ազդող հաջորդ գործոնը, այսպես կոչված իրային կամ կապիտալային գործոնն է: Եթե աշխատանքի առարկաներին առնչվող ծախսերը համարվում են գնի ծևավորման ուղղակի ծախսեր, ապա աշխատանքի միջոցների ծախսերը գնի կազմում ներառվում են իրեւ անուղղակի ծախսեր: Նետևապես արտադրության այդ գործոններով պայմանավորված գնի փոփոխությունը կախված է արտադրողական ուժերի գարգացման մակարդակով և գիտության, և տեխնիկայի գարգացման հետևանքով վերջիններիս գարգացման փոփոխությամբ: Գների մակարդակի վրա որոշ ազդեցություն են ունենում բնական պայմանները, բնական ռեսուրսների առկայությունը, բնական ռեսուրսների արդյունահանման կատարելագործումը: Գների մակարդակի վրա ազդում են նաև արտադրված արտադրանքի երկրի տարրեր շրջանների միջև բաշխման կազմակերպումը:

Գնի արժեքից շեղումը:

Գների մակարդակի վրա ազդող գործոնների երկրորդ խումբը ընդգրկում է գինն արժեքից շեղող գործոններ.

1. արտադրանքի սպառողական հատկանիշների փոփոխություն,
2. պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխություն,
3. սոցիալական գործոններ:

Որպեսզի գները նպաստեն բարձր որակ ունեցող արտադրանքի բողակմանը, պահանջվում է շուկայական գների միջոցով ապահովել յուրաքանչյուր արտադրանքի երկու կողմերի՝ արժեքի և սպառողական արժեքի միասնությունը: Դա նշանակում է, որ տարրեր որակ ունեցող ապրանքների գները պետք է համպատասխանեն դրանց հասարակական օգտակարությանը, քանի որ միայն շուկայում է՝ սպառողական արժեքը դրսնորվում փոխանակային արժեքի տեսքով: Նիշտ է արժեքը ծևավորվում է արտադրության և շրջանառության ոլորտում. սակայն դրա օգտակարության աստիճանը բացահայտվում և գնահատվում է միայն շուկայում, որտեղ ծևավորվում է փոխանակային արժեքը: Որքան բարձր է օգտակարությունը, այնքան գներն ավելի են շեղվում արժեքից: Արժեքից գնի շեղման պրոցեսը առավել հանգամանորեն ուսումնասիրել է Ա. Մարշալը: Նա ընդունելով սահմանային օգտակարության տեսության միակողմանիությունը, դրան միացրեց նաև սպառողական

շուկայում պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության գործոնը, որը նպաստում է զնի արժեքից շեղմանը:

Գինն արժեքից շեղող հաջորդ գործոնների խումբը ներառում է սոցիալական խնդիրները:

Նախ գինն օգտագործվում է համապատասխան նշանակություն ունեցող սոցիալական խնդիրների լուծման, սոցիալապես անպաշտպան խնդերի կարիքների բավարարման, առանձին քաղաքացիներին արտոնյալ պայմանների ապրանքների տրամադրման նպատակով։ Որքան լայն են այս ուղղություններով պետության կողմից իրականացվող միջոցառումների շրջանակները, այնքան բնակչության որոշ խնդերի ապրելակերպ բարելավված է, իսկ մարդու իրավունքներն ավելի զնահատված և պաշտպանված։

Տնտեսական քաղաքականության հետ կապված գործոններ:

Պետության տնտեսական քաղաքականության կարևոր տարրերից են գների ռազմավարությունը, որի ճիշտ և ժամանակային իրականացումը որոշիչ դեր է կատարում երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում։

Ինչպես տնտեսության կայունացման համար անհրաժեշտ անեն մի գործունեություն, այնպես էլ գնագոյացման ռազմավարությունը սկսվում է որոշակի նպատակային խնդիրների որոշմամբ և ավարտվում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմամբ։

Խնդիրներից են 2003 թ. ԼՂԴ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը զբաղեցնում էր վերամշակող արդյունաբերությունը՝ 66,4 տոկոս, այնուհետև էլեկտրականագործիկա, զագ և ջրամատակարարում ճյուղը՝ 23,8 տոկոս և հանքագործական արդյունաբերությունը՝ 9,8 տոկոս, իսկ 2004-ին համապատասխանաբար՝ 48,9, 16,2 և 34,9, և 2005 թ. 46,7, 17,3, 36 տոկոս տարում երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում։